«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հաստատություն՝ «Կապանի թիվ 6 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Արմինե Առուստամյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

Մաս 1 Երեխաների դաստիարակության գործում ընտանիքի և նախադպրոցա-

կան հաստատության համագործակցության էությունը և բաղադրիչները---------- 4

1.2 Ընտանիքի և նախադպրոցական հաստատության համագործակցության

ձևերն ու տեսակները ----------**8**

Մաս 2 Ընտանիքի հետ կապի ստեղծում----------11

2.1 Ընտանիքի հետ համագործակցութունը՝ ծնողներին կրթական գործընթացում

ներգրավելու միջոց----------11

2.2 Ծնողների ներգրավվածության ժամանակակից ձևերը կրթական գործընթա-

ցում----------12

Եզրակացություններ,առաջարկություններ ----------**13**

Գրականության ցանկ----------15

Ներածություն

Մանկավարժներն ու ծնողներն ունեն ընդհանուր խնդիր՝ անել ամեն ինչ, որպեսզի երեխա- ներն երջանիկ, ակտիվ, առողջ, կենսուրախ,շփվող մեծանան, որպեսզի նրանք դառնան ներ- դաշնակ զարգացող անհատականություններ:Նախադպրոցական տարիքի երեխաների լիարժեք դաստիարակությունը տեղի է ունենում ընտանիքի և նախադպրոցական հաստատության սերտ համագործակցության պայմաններում:Ընտանիքը երեխայի սոցիալականացման առաջին և կարևոր հաստատությունն է:Ընտանիքում են բացահայտվում երեխայի անհատական առանձնահատկություններն ու ձևավորվում բնավորության գծերը, դաստիարակվում են բարոյական հատկություններ և սոցիալական վարքագծի հիմքեր: Ընտանիքն այն կայուն սոցիալական օղակն է,որն ուղեկցում և առաջնորդում է երեխային իր ողջ կյանքում: Մանկապարտեզում է երեխան սկսում հաղորդակցվել և համագործակցել, որոշումներ կայացնել, համաձայնեցնելով սեփական ցանկությունն ու կարծիքը ընկերների ցանկությունների և կարծիքների հետ: Եթե մանկապարտեզում և ընտանիքում երեխային ներկայացվող պահանջները համաձայնեցված չեն, ապա օգտակար հմտությունների և սովորությունների զարգացումը շատ դժվար կլինի: Ուստի մեր ուսումնասիրությունն այսօր շատ արդիական է և հետազոտական աշխատանքի նպատակն է ուսունասիրել ընտանիքի և նախադպրոցական հաստատության միջև հասարակության զարգացման ներկա փուլում երեխայի կրթության ոլորտում համագործակցության ձևերն ու տեսակները, ուսումնադաստիարակչական գործընթացում ընտանիքի գործուն դերի ապահովումը, ծնողների ներգրավումը, տարրական դպրոց երեխայի սահուն անցման ապահովումը:

Չափորոշչային այս սկզբունքներից հետևում է, որ նախադպրոցական կրթության ապահովման համար կարևորվում են երեխան, ընտանիքը,մանկավարժը, ուսումնական ծրագրերը և կրթության կազմակերպման միջավայրը:

ՈՒսումնասիրության առարկան երեխայի դաստիարակությունն է,
հետազոտության առարկան ընտանիքի և նախադպրոցական հաստատության համագործակցությունն է, ուսումնասիրել ընտանիքի և նախադպրոցական հաստատության միջև համագործակցության ժամանակակից ձևերը երեխայի կրթության և դաստիարակության գոհնում:

Մաս 1

Երեխաների դաստիարակության գործում ընտանիքի և նախադպրոցական հաստատության համագործակցության էությունը և բաղադրիչները

Երեխայի լիարժեք զարգացման, նրա անձնավորության ձևավորման գործընթացների արդյունավետությանը պայմանավորված է սոցիալական տարբեր ինստիտուտների մանկա-վարժական ներգործության փոխազդեցությամբ:

Հասարակության զարգացման բոլոր ժամանակներում կրթության գործառույթը մշտապես իրականացվել է ընտանիքի կողմից: Ընտանիքում էր,որ կյանքի փորձի, գիտելիքի, հմտութ-յունների և կարողությունների հարստությունը փոխանցվեց սերնդեսերունդ, ծնողներից երե-խաներին՝ մեծերի կենդանի օրինակի օգնությամբ: Երեխայի համար ընտանիքը և բնակավայր է, և կրթական միջավայր: Ընտանիքի ազդեցությունը, հատկապես երեխայի կյանքի սկզբնա-կան շրջանում, զգալիորեն գերազանցում է այլ կրթական ազդեցություններին:

Անհատականության ձևավորման հաջողությունը հիմնականում որոշում է ընտանիքը: Որքան
լավ է ընտանիքը և որքան լավ է այն ազդում դաստիարակության վրա, այնքան բարձր են անհատի ֆիզիկական, բարոյական աշխատանքային դաստիարակության արդյունքները, սակայն լինում են հազվագյուտ բացառություններ:

Բավական է, որ փորձառու դաստիարակը նայի և շփվի երեխայի հետ, որպեսզի հասկանա, թե ինչպիսի ընտանիքում է նա դաստիարակվել:
Նույն կերպ դժվար չէ ծնողների հետ խոսելուց հետո պարզել թե ինչպիսի երեխաներ են մեծանում նրանց ընտանիքում: Ընտանիքն ու երեխան միմյանց հայելային պատկերներն են: [Ա.Ս. Մարության, Ա.Մ. Դալաքյան « Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք,Երևան 2008թ.]

Երկար ժամանակ վեճ է եղել այն մասին, թե որն է ավելի կարևոր մարդու ձևավորման մեջ՝ ընտանիքը, թե ուսումնական հաստատությունը: Որոշ մեծ մանկավարժներ հենվել են ընտանիքի օգտին, մյուսները նախապատվությունը տվել են հասարակական հաստատութ-յուններին: Այսպիսով, Յա.Ա.Կոմենսկին մայրական դպրոց անվանեց այն գիտելիքների հաջորդականությունն ու քանակությունը, որը երեխան ստանում է մորից: Բայց ուտոպիստ սոցիալիստ Ռոբերտ Օուենը ընտանիքը համարում էր չարիքներից մեկը նոր մարդու ձևավորման ճանապարհին: [«Ծնողներ և դաստիարակներ»,Լ.Վ. Զագիկ, Վ.Մ. Իվանովա]

Ժամանակակից ընտանիքի համար բնորոշ է ընտանեկան կրթությունը ուսումնական հաստատության հետ համատեղելու ցանկությունը: Կրթության մեջ միասնությունը, որն իրականցվում է մանկապարտեզի և ընտանիքի կողմից, ապահովում է երեխայի դինամիկ զարգացում,ուսումնական գործընթացն ընդանում է ավելի քիչ դժվարություններով, երեխան ավելի հեշտ է տիրապետում սահմանված նորմերին ու կանոններին:

Նախադպրոցական հաստատության և ընտանիքի համագործակցությունն ենթադրում է, որ ծնողներն ունեն պատասխանատվություն, իսկ դաստիարակները՝ ընտանիքակենտրոն մանկավարժական գործունեություն՝ հիմնված երեխայի միայն ընտանիքի համատեքստում դիտարկելու վրա: Նման համագործակցության հիմնական միջոցը կրթական փոխգործակ-ցության կազմակերպումն է:

Մանկապարտեզի դաստիարակության և կրթության ծրագրերում ընդգծվում է, որ նախա-դպրոցական հիմնարկների մանկավարժների առջև խնդիր է դրված մանկավարժական գիտելիքները տարածել ծնողների միջև, օգնել նրանց ճիշտ դաստիարակել երեխային և նպաստել լավագույն դաստիարակության փորձին:

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Համագործակցության արդյունքում թե ծնողը, թե դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:[Հ. Միտոյան, Լ. Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան, 2010թ.]

Մանկապարտեզի և ընտանիքի համատեղ աշխատանքը հիմնված է հետևյան հիմնական դրույթների վրա, որոնք որոշում են այս աշխատանքի բովանդակությունը, կազմակերպումը և մեթոդաբանությունը.

Երեխայի դաստիարակության գործում մանկապարտեզի և ընտանիքի աշխատանքում միասնություն.

Այն ձեռք է բերվում, երբ կրթության նպատակներն ու խնդիրները լավ գիտեն և հասկանում են ոչ միայն դաստիարակները, այլև ծնողները, երբ ծնողները ծանոթ են երեխայի դաստիարա-կության հիմնական բովանդակությանը, մեթոդներին և որոշակիորեն տիրապետում են դրանց:

Փոխադարձ վստահություն դաստիարակի և ծնողների միջև, որպես դաստիարակ հասկանալով երեխայի կարիքներն ու շահերը:

Ընտանիքում՝ դաստիարակի և մանկապարտեզում՝ ծնողների հեղինակության ամրապնդում:

Ինքնաքննադատության վրա հիմնված ճիշտ հարաբերությունների հաստատում:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության վերաբերյալ համատեղ աշխատանքում փոխադարձ օգնություն:

Մանկապարտեզն ամեն օր տարբեր ձևերով օգնում է ծնողներին երեխայի դաստիարակության հարցում: Իրենց հերթին ծնողներն օգնում են մանկապարտեզին տարբեր կրթական և տնտեսական աշխատանքներում՝ դրանով հոգալով ոչ միայն իրենց, այլև մյուս երեխաների դաստիարակության մասին:

Ընտանեկան կրթության լավագույն փորձի ուսումնասիրում, ծնողների շրջանում դրա խթանում, մանկապարտեզի աշխատանքներում ընտանեկան կրթության դրական մեթոդների կիրառում (անհատական երեխայի մոտեցման մեջ և այլն):

Ընտանիքի հետ մանկապարտեզի աշխատանքի տարբեր ձևերի օգտագործումը նրանց հարաբերություններում. ծանոթացում երեխային կյանքին տանը, մանկավարժական զրույցներ ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ, խորհրդատվություն, խմբային և ընդհանուր ծնողական ժողովներ, լսումներ, հարց ու պատասխանի երեկոներ և այլն: Ծնողների հետ աշխատանքի անհատական և կոլեկտիվ ձևերը լրացնում են միմյանց: Դաստիարակի ամենօրյա շփումը երեխայի հետ կամ մոր հետ, մեծ հնարավորություն է ստեղծում անհատական աշխատանքի, ընտանիք-մանկապարտեզ հարաբերությունների ամրապնդման համար:

Համակարգված, որոշակի պլանի համաձայն, ամբողջ տարվա ընթացքում մանկապարտեզի և ծնողների միջև հաղորդակցություն՝ հաշվի առնելով երեխայի հետ տարվող կրթական աշխատանքի ձևերն ու բովանդակությունը;

Ակտիվ ծնողների, հանրության ներգրավում հաստատության գործունեությանը աշխատանք ընտանիքների հետ: [Детский сад и семья/ Н.Ф. Виноградова, Г. Н. Година и др. Просвеение,1986]

Այսպիսով, երեխան, ստանալով առաջնային սոցիալականացում ընտանիքում, ձեռք է բերում փորձ նախադպրոցական հաստատությունում՝ հաղորդակցություն հասակակիցների հետ, համագործակցություն այլ երեխաների և մեծահասակների հետ և ինքնուրույն գործունեություն, մարմնամարզությամբ, երաժշտությամբ,կերպարվեստով և այլն զբաղվելու հնարավորություն:

Ընտանեկան դաստիարակությունը և մանկավարժների աշխատանքը նախադպրոցական հաստատությունում լրացնում են միմյանց, ինչի արդյունքում երեխան ստանում է ներդաշնակ զարգացում:

1.2 Ընտանիքի և նախադպրոցական հաստատության համագործակցության ձևերն ու տեսակները

«Նախադպրոցական կրթության մասին» օրենքով ծնողներին տրվում է ընտրության իրավունք՝ ընտրելու նախադպրոցական ուսումնական հաստատությունը, կրթական ծրագիրը և ծառայությունները, մասնակցելու նախադպրոցական կրթության գործընթացին, մասնակցելու մանկավարժների կողմից իրականացվող ծնողական կրթության դասընթացներին [Հ Հ օրենքը նախադպրոցական կրթության մասին, հոդված 16]:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ համագործակցությունը և նրանց ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի գործունեությանը օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Ծնողների հետ աշխատանքի նոր ձևերի որոնումը միշտ արդիական է: Մանկապարտեզը պետք է համակարգված, նպատակային աշխատանք տանի ծնողների հետ և լուծի հետևյալ առաջնահերթ խնդիրները.

- յուրաքանչյուր երեխայի ընտանիքի հետ գործընկերային հարաբերություններ հաստատելը
- երեխայի զարգացման և կրթության համար ջանքերի համախմբում
- փոխըմբռնման, ընդհանուր հետաքրքրությունների, փոխադարձ աջակցության մթնոլորտի ստեղծում
- ծնողների կրթական հմտությունների ակտիվացում և հարստացում

Այսօր մանկապարտեզի ծնողները հանդես են գալիս ոչ միայն պահանջողի դերում, այլև հնարավորություն ունեն օբեկտիվորեն գնահատելու մանկապարտեզի աշխատանքի մակարդակը, ուստի արդյունավետ համագործակցություն կառուցելու նպատակով կիրառում են ինչպես **ավանդական,** այնպես էլ **ոչ ավանդական աշխատանքի ձևեր:**

Առանձնանում են ընտանիքի հետ ավանդական աշխատանքի հետևյալ ձևերը. **անհատական ,զանգվածային (կոլեկտիվ), խմբային, :**

Անհատական ձևերը ներառում են.

- **զրույցներ**
- **խորհրդատվություններ (ծնողների հարց ու պատասխանի տեսքով)**
- **մանկավարժական առաջադրանքներ**
- **այցելություն ընտանիք (**տնային այցերը դաստիարակին երեխայի և ծնողների կյանքի պայմանների մասին լրացուցիչ տեղեկություններ է տալիս**)**

Բացի ընտանիքների հետ աշխատելու ավանդական ձևերից, մանկապարտեզները սկսել են ակտիվորեն օգտագործել ընտանիքների հետ աշխատանքի նորարարական ձևեր և մեթոդներ.

- «Կլոր սեղան» ցանկացած թեմայով
- թեմատիկ ցուցահանդեսներ
- սոցիալական հետազոտություն, ախտորոշում, անկետավորում
- ընտանեկան սպորտային հանդիպումներ
- վստահության փոստ, վստահության հեռախոս
- բաց պարապմունքներ ծնողների համար
- բարի գործերի օրեր
- գաղափարների տոնավաճառ
- մանկավարժական հյուրասրահ
- ընտանեկան տաղանդների մրցակցություն

[Հ. Միտոյան, Լ. Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան,2010թ.]

Կոլեկտիվ ձևը ներառում է.

- մանկավարժական դասախոսություններ
- ծնողական համաժողովներ, որի նպատակն է ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումը
- ծնողական ժողովներ (ամենատարածված ձևը)՝ խմբային և ընդհանուր

Ուսումնական տարվա սկզբին անցկացվող ծնողական ժողովների ժամանակ ծնողները ծանոթանում են տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներին, կրթության և դաստիարակության պլաններին, նախադպրոցական կրթության պետական չափորոշչին, անդրադառնում նախադպրոցական կրթության մասին օրենքին: Տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ: Ձևավորվում են ծնողական անկյուններ, որտեղ տեղադրվում են ծնողների համար խորհրդական նյութեր՝ ծրագրի բոլոր բաժիններով:[Հ. Միտոյան, Լ. Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան, 2010թ.]

Ծնողների հետ համագործակցության ընդհանուր **խմբային ձևը** ծնողական խորհրդի հետ աշխատելն է(մանկավարժական թղթապանակներ, վահանակներ, բաց դռների օրեր): Ծնողական խորհրդի աշխատանքը ղեկավարում է մանկապարտեզի տնօրենը: Ծնողական խորհուրդը ստեղծված է մանկապարտեզի և ծնողների մշտական և համակարգված շփումն ապահովելու նպատակով: Ծնողական խորհուրդը ծնողական համայնքի ներկայացուցչական մարմին է, որը կոչված է օգնելու մանկապարտեզին իր աշխատանքներում և կազմակերպելու բոլոր ծնողների կողմից երեխաների դաստիարակության և այդ ոլորտում պետական պահանջների կատարումը: Ծնողական խորհուրդն իր գործունեությունը պլանավորում է կրթական աշխատանքի պլանին համապատասխան և հաշվի առնելով պայմանները: Պլանի կազմմանը մասնակցում է հաստատության ղեկավարը: Մանկապարտեզի համար հատկապես կարևոր է ծնողական խորհրդի օգնությունը մանկավարժական գիտելիքների տարածման, ընտանեկան կրթության դրական փորձի տարածման, ինչպես նաև այն ընտանիքներին աջակցելու գործում, որտեղ երեխայի դաստիարակությունը լավ չի ընթանում:

Մաս 2 Ընտանիքի հետ կապի ստեղծում

Նախադպրոցական տարիքի երեխայի լիարժեք դաստիարակությունը տեղի է ունենում ընտանիքի և նախադպրոցական հաստատության միաժամանակյա ազդեցության պայմաններում: Մանկապարտեզի և ընտանիքի միջև երկխոսությունը կառուցված է դաստիարակի կողմից երեխայի ձեռքբերումների, նրա դրական հատկությունների, ուժերի և կարողությունների նկատմամբ հավատի ցուցադրման հիման վրա: Որպես կանոն, դաստիարակին վստահում են, լսում նրա խորհուրդները:

Որպեսզի ծնողները դառնան ակտիվ օգնականներ և դաստիարակի համախոհ, անհրաժեշտ է նրանց ներգրավել մանկապարտեզի կյանքին, մշտապես տեղյակ պահել բոլոր իրադարձութ-
յունների մասին:

2.1 Ընտանիքի հետ համագործակցութունը՝ ծնողներին կրթական գործընթացում ներգրավելու միջոց

Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ

օրվա ժամակարգին, աշխատակարգին, դառնալ ավելի ինքնուրույն: Երեխային տանելով մանկապարտեզ, ծնողները պետք է ուշադրություն դարձնեն, թե որքանով է մանկապարտեզը երեխայի զարգացման համար նպաստավոր միջավայր ապահովում,ինչ մեթոդներով են իրականացվում երեխայի զարգացման ծրագրերը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ մանկապարտեզից հետո երեխաներն ավելի արագ են հարմարվում դպրոցին: Այստեղ գլխավորը ոչ թե ձեռք բերած գիտելիքներն են, այլ կյանքի մի շարք հմտությունները, օրինակ՝ ռեժիմին սովոր լինելը, ուշադրության կենտրոնացումը, խմբով աշխատելը, սոցիալական հմտությունները և այլն:

Որպես կանոն՝ երեխաների սոցիալական զարգացման վրա ներազդումը իրականացվում է ընտանիքում, որը հանդիսանում է գիտելիքների, արժեքների,

վերաբերմունքի դերերի և սովորույթների ուղեկիցը սերնդից-սերունդ: Սոցիալական զարգացումը երեխայի անձնավորության զարգացման հուսալի երաշխիքն է, այն ուղղված է երեխայի անձնային հիմնարար որոկների և սոցիալական հմտությունների ձևավորմանը:

Սոցիալական փորձի ձեռքբերման գործընթացում ձևավորվել են անձնային այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ հասակակիցների և մեծերի հետ հաղորդակցվելու, ազատ ընտրություն կատարելու, որոշումներ կայացնելու, համագործակցային կարողություններ, ինչպես նաև հուզականորեն արձականքելու, կարեկցելու, փոխօգնության և փոխզիջման ունակություններ ու հմտություններ:

Սոցիալական զարգացման արդյունքում ձեռք բերվող անձի՝ սոցիալական զարգացման առավել կարևոր գործոնը ընտանիքի մթնոլորտը, նրա դաստիարակության ոճն է: Այն ըստ էության՝ թե ինչպես է իրականացվում ծնողների շփումը երեխաների հետ, շատ բանով կախված է դաստիարակության ոճից, որն էլ իր հերթին բնորոշվում է այն արժեքներով, որ ընդունված են ընտանիքում և ծնողները ձգտում են հաղորդել երեխաներին [Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տ) կրթական համալիր ծրագիր, Երևան 2008թ]:

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Կարևոր է, որ ծնողները զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հատկանիշները և մասնակցեն մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացին: Այս համագործակցությունից շահում է թե երեխան, թե ընտանիքը, թե տվյալ հաստատությունը: Սակայն ընտանիքները շատ տարբեր են, և չենք կարող ակնկալել, որ բոլոր ընտանիքները նույն կերպ կմասնակցեն երեխայի

կրթությանը,խնամքին, դաստիարակությանը, կաջակցեն ամենափոքր հարցերում: [Ա.Ս. Մարության, Ա.Մ. Դալաքյան « Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք,Երևան 2008թ.]

Այս պարագայում մեծ է մանկապարտեզի և մանկավարժի դերը: Երեխայի հետ աշխատող դաստիարակը պետք է խոսի ծնողի հետ, քննարկի երեխային վերաբերվող բոլոր խնդիրները:

Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար, դաստիարակը պետք է բազ- մաբնույթ գործողություններ ծավալի, տարբեր ռազմավարություն կիրառի,լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի, համբերատար, բանիմաց և հոգատար:

Ծնողի տեղեկացված լինելը երեխայի ցանկացած արարքի մասին, էլ ավելի է հեշտացնում համագործակցությունը ծնողի հետ, ավելի է միավորում նրանց որպես գործընկերներ և արդյունավետ դարձնում աշխատանքը:

Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է, որ **մանկապարտեզը դառնա բաց համակարգ:** Ամենից առաջ անհրաժեշտ է մանկապարտեզի դռները լայն բացել ծնողների և ընտանիքի մյուս անդամների առաջ:Հարկավոր է ընդլայնել ավանդական հաղորդակցման (տոնակատարություններ, ծնողական հավաքներ և այլն) շրջանակները: Մանկապարտեզի կյանքին ծնողների մասնակցությունը օգնում է ավելի լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը, հասկանալ իրենց երեխաների հաջողությունների և դժվարությունների հիմքերն ու պատճառները, հասկանալ երեխայի զարգացման հետ կապված հարցերը, որոնք ավելի հեշտ կդարցնեն երեխայի դաստիարակությունը տանը:

2.2 Ծնողների ներգրավվածության ժամանակակից ձևերը կրթական գործընթացում

Աճող սերնդի դաստիարակության և կրթության հաջողությունները պայմանավորված են բոլոր սոցիալական ինստիտուտների միջև հաստատվող փոխվստահելի և փոխպատասխանատու համագործակցությամբ:Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակները, որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից, այն է. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը (այսուհետ՝ չափորոշիչ) հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները,

ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը: **ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ,** 13 մայիսի 2021 թվականի N 744-Ն

Այսօր կրթական գործընթացում ծնողների մասնակցության աստիճանը որոշելու համար կան մի քանի չափանիշներ. դրանք ներառում են՝ ծնողների ակտիվ մասնակցությունը խմբային միջոցառումներին և խորհրդատվություններին, մասնակցությունը էքսկուրսիաների նախապատրաստմանը և անցկացմանը, մասնակցություն բաց պարապմունքներին, բաց դռների օր, մասնակցություն սպորտային միջոցառումներին և այլն:

Ծնողների հանդիպումները դաստիարակի և ծնողների միջև հաղորդակցության արդյունավետ ձև է:

Ծնողների ներկայությունը մանկական միջոցառումներին

Ցուցահանդեսներին մասնակցելը օգնում է ծնողներին ներգրավել երեխաների հետ համատեղ ստեղծագործական գործունեության ակտիվ համագործակցությանը

Բաց դռների օր (հնարավորություն է տալիս ծանոթանալ երեխայի դաստիարակության, կրթության և զարգացման պայմաններին)

Ծնողների համար վարպետության դասերը, որոնք թույլ են տալիս գիտակցել դաստիարակի և ծնողների միջև փոխըմբռնման հաստատման, գիտելիքների և փորձի փոխանակման անհրա-ժեշտությունը:

Մեր մանկապարտեզում ապահովված է բաց և թափանցիկ միջավայրը: Ծնողը կարող է ցանկացած պահի մասնակցել երեխայի առօրյային, իսկ մանկապարտեզի բուն գործունեությանը ծնողներին ներգրավելու նպատակով իրականացվում են բազմաթիվ և բազմաբնույթ նախագծեր: Ծնողը ոչ միայն պատվիրատու է, գործընկեր, այլև իր երեխային վերաբերող նյութի յուրացնողը, իրագործողն ու տարածողը:

Հաստատությունում դաստիարակները միշտ աշխատում են ծնողների հետ, նրանք մշտապես տեղյակ են մանկապարտեզի ծրագրերին, գործունեությանը, մանկավարժական մոտեցումներին և մեթոդիկային: Ավելին, կարող են մասնակցել, առաջարկներ անել, որոնք անպայման լսվում են, քննարկվում, ընդունվում:

Եզրակացություններ,առաջարկություններ

Մանկավարժների և ծնողների համագործակցության խնդիրը ներկայումս արդիական է: Մշակվում են տարբեր ծրագրեր և նախադպրոցական հաստատության և ընտանիքի փոխգործակցության նոր ուղիներ, ավելանում է այս կարևոր խնդրին նվիրված գիտամեթոդական աշխատանքների թիվը:

Համագործակցության խնդիրների լուծումը պահանջում է, որ դաստիարակները մասնակցեն ծնողների հոգեբանական և մանկավարժական դաստիարակությանը, ուսումնասիրեն ընտանիքները, նրանց կրթական հնարավորությունները, ծնողներին ներգրավեն մանկապարտեզի կրթական և դաստիարակչական աշխատանքներին:

Նախադպրոցական հաստատության ղեկավարը հաստատության և սաների ընտանիքների միջև համագործակցության կազմակերպիչն ու համակարգողն է:

Նախադպրոցական հաստատության և ծնողների միջև համագործակցության հիմնական խնդիրները և մոտավոր բովանդակությունը ներառվում են տարեկան պլանում՝ հաստատության ղեկավարի և մեթոդիստի կողմից:

Երեխայի կրթության և դաստիարակության մեջ դրական արդյունքներ են ձեռք բերվում համագործակցության տարբեր ձևերի հմուտ համադրմամբ՝ նախադպրոցական հաստատության թիմի բոլոր անդամների և երեխաների ընտանիքների անդամների ակտիվ ներգրավվածությամբ այս աշխատանքում: Ծնողները ցուցաբերում են ակտիվություն և բարձր պատասխանատվություն, եթե դաստիարակի հետ հարաբերությունները կառուցված են թափանցիկ, վստահության, համագործակցության վրա:

Ընտանիքը զգալի դաստիարակչական ազդեցություն ունի երեխայի վրա, ոչ մի մանկավարժ այս հարցում չի կարող համեմատվել ծնողների հետ: Երեխան, ընտանիքում ստանալով առաջնային սոցիալականացում, մանկապարտեզում ձեռք է բերում փորձ՝ հաղորդակցություն հասակակիցներ հետ, համագործակցություն այլ երեխաների և մեծահասակների հետ, ինքնուրույն գործունեություն: Ընտանիքում կրթությունը և նախադպրոցական հաստատությունում դաստիարակի աշխատանքը լրացնում են միմյանց, ինչի արդյունքում երեխան ստանում է ներդաշնակ զարգացում:

Այսօրվա ծնողներից շատերը ունեն կրթության մասին սեփական տեսլականն ու լուծման ուղիները՝ հաշվի չառնելով դաստիարակի փորձն ու կրթությունը: Նման իրավիճակները կանխելու համար նախադպրոցական հաստատության ղեկավարը երեխայի մանկապարտեզում գտնվելու առաջին իսկ օրերից պետք է պահպանի

դաստիարակի հեղինակությունը, ցույց տա, որ բարձր է գնահատում նրա գիտելիքները, հմտությունները և մանկավարժական կարողությունը:

Այսպիսով, ելնելով վերը նշվածից, կարող ենք ասել, որ ընտանիքի և նախադպրոցական հաստատության սերտ համագործակցությունն է իսկապես նպաստում բազմակողմանի, ֆիզիկապես և հոգեպես առողջ երեխայի դաստիարակությանը:

Գրականության ցանկ

1. Ա. Ս. Մարության, Ա. Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, Երևան 2008թ.

2.Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան, 2010թ.

3. **ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ,**13 մայիսի 2021 թվականի N 744-Ն որոշում,Երևան,

4.Հ Հ օրենքը նախադպրոցական կրթության մասին 06.05.2020թ. ՀՕ-267-Ն

5. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տ) կրթական համալիր ծրագիր, Երևան 2008թ

6. «Ծնողներ և դաստիարակներ» Լ.Վ. Զագիկ,Վ.Մ.Իվանովա

7. Детский сад и семья/ Н.Ф. Виноградова, Г. Н. Година и др. Просвеение,1986